Լարիսա ԵԳԱՆՅԱՆ

ԴՐՈՇՄԱԶԱՐԴ ԿԱՐԱՍՆԵՐ ՇԻՐԱԿԻՑ

Հայաստանում դրոշմազարդ կարասները լայն տարածում են ստանում XI-XII դարերում և առավելապես հայտնի են Անիի[1]և Դվինի[2] պեղումներից: Գտնվել են նաև Գառնիից[3] և Անբերդից:[4]

Դրոշմազարդ կարասների հետ կապված մի շարք հարցերով զբաղվել են տարբեր գիտնականներ: Տարբեր են դրանց ծագման, արտադրության կենտրոնների, ինչպես նաև թվագրման վերաբերյալ կարծիքները:

Անիից գտնված դրոշմազարդ կարասներն ուսումնասիրելիս, դեռևս 1930-ական թվականներին,Գ.Չուբինովը կարասների թվագրումը կատարեց ըստ զարդանախշերի՝ դրոշմների տարաբնույթ տեսարանները համարելով մահմեդական արվեստի արդյունք: Ըստ Չուբինովի՝ «զարդարման բարձր տեխնիկան և նրա տարբեր եղանակները մահմեդական արվեստի հնարանք են, բնավ ո՛չ հայկական: Անիում սա բացառապես հանդես է գալիս իբրև օտար գեղարվեստական ստեղծագործության արդյունք»:[5] Անբերդից գտնված դրոշմազարդ կարասներով զբաղվող Տ. Իզմայլովան թեև քննադատում էր Չուբինովի տեսակետը, սակայն ինքը ևս չկարողացավ ամբողջությամբ ազատվել այդ սխալ տեսակետից:[6] Ռուս գիտնականներից Բ. Շելկովնիկովը գտնում է, որ դրոշմազարդ կարասները վերաբերում են XII-XIII դարերին:[7] Հետագայում հայ գիտնականների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այս տիպի կարասների արտադրության կենտրոնները եղել են Հայաստանում և հայկական տարր ունեցող անդրկովկասյան քաղաքներում,[8] իսկ Դվինի նյութերի ուսումնասիրության արդյունքում Կ.Ղաֆադարյանը հանգեց այն կարծիքին, որ դրոշմազարդ կարասները լայն կիրառություն են ունեցել Դվինում, արտադրվել են տեղում և թվագրվում են IX-XI դարերով:[9] Կ. Ղաֆադարյանն ու Ա. Քալանթարյանը, դիտողություններ անելով խեցեղենի արտադրության հավանական կենտրոնների մասին, չեն բացառում, որ Դվինի և Անիի արտադրանքով առաջին հերթին ապահովվել են Արարատյան դաշտը և Շիրակը:[10] Դրոշմազարդ կարասներ գտնվել են նաև Անբերդից (բոլորը բեկորային): Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք արտադրվել են տեղում և թվագրվում են XII-XIII դդ.:[11] Դվինի, Անիի և Հայաստանի մյուս հնավայրերից հայտնաբերված դրոշմազարդ խեցեղենի խնդիրներով, հատկապես գեղարվեստական խեցեղենի զարդաձևերով, զբաղվել է նաև Ֆ. Բաբայանը:[12]

Սույն հոդվածում քննության առարկա են Շիրակի միջնադարյան մի քանի հնավայրերի (Մարմաշեն, Կումայրի, Հայկաձոր)* պեղումներից հայտնաբերված դրոշ-

---

[1] *Հատկանշական ցուցակ բանգարանային ժողովածուների, պրակ, II, Անի քաղաքի պեղումներից հայտնաբերված առարկաները, Եր., 1982, էջ 8-24:*

[2] *Ա. Ք ա լ ա ն թ ա ր յ ա ն, Դվին I, Եր., 1976, էջ 70-71; Կ. Ղաֆադարյան, Ա. Քալանթարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները 1973-1980թթ., Եր., 2002, էջ 83-84:*

[3] *Բ. Ա ռ ա ք ե լ յ ա ն, Գ. Կ ա ր ա խ ա ն յ ա ն, Գառնի III, Եր., 1962, էջ 74-80:*

[4] *Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն, Անբերդ, Եր., 1978, էջ 97-98:*

[5] *Г. Ч у в и н о в, Декоративное убранство анийских карасов, Христианский Восток, т. V, вып. 1, П гр., 1916г.*

[6] *Т. И з м а й л о в а, Керамика из раскопок в Анверде, стр. 192.*

[7] *Б. Ш е л к о в н и к о в, Художественная керамическая промышленность средневековой Армении, Տեղեկագիր, 3-4, Եր., 1942, էջ 11-14:*

[8] *Կ.Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Ա. Ք ա լ ա ն թ ա ր յ ա ն, նշվ. աշխ. էջ 84:*

[9] *Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Դվին քաղաքը և նրա պեղումները, Եր., 1952, էջ 194-197:*

[10] *Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Ա. Ք ա լ ա ն թ ա ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 84:*

[11] *Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 98:*

[12] *Ֆ. Բ ա բ ա յ ա ն, Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական խեցեղենի զարդաձևերը, Եր., 1981:*

* *Մարմաշենի և Կումայրիի պեղումները ղեկավարել է հնագետ Ս. Հարությունյանը:*

մազարդ կարասները: Բոլոր գտածոները բեկորային են: Դրոշմները ներկայացնենք ըստ թեմաների.

Երկրաչափական զարդանախշեր. Կումայրիի պեղումներից գտնված բեկորը կարմիր ամանի եռանկյունաձև ունկ է, որի վրա խաչ է դրոշմված (ՇԵԹ 3702/24):** Բեկորի վրա պահպանվել են հավասարաթև խաչի երեք թևերը (տախտակ I, նկ.2):

Բաց վարդագույն երեսով, մոխրագույն աստառով մանրահատիկ կավից, լավ թրծված կարասի մեկ այլ բեկորի վրա արված կնքադրոշմը 3,7սմ երկարություն և 3սմ լայնություն ունեցող ուղղանկյուն է: Կենտրոնից չորս անկյունները գնացող ճվածիրներով և դրանց միջև արված փոքր եռանկյունիներով ստացվել է վարդյակի և հավասարաթև խաչի պատկեր (ՇԵԹ 3702/27) (տախտակ I, նկ.3): Այս զարդանախշի ամենավաղ օրինակները հայտնի են վաղ քրիստոնեական ճարտարապետական կոթողներից և պահպանվել են Ագարակի և Թալինի վաղ միջնադարյան քառակող կոթողների պատվանդանների վրա:[13]

Մոխրագույն, մանրահատիկ կավից լավ թրծված կարասի մեկ այլ բեկորի վրա պահպանվել է կնքադրոշմի երկու պատկեր (ՇԵԹ 3702/30): Երկուսն էլ թերի են (տախտակ I, նկ.4): Դրոշմներն արվել են իրարից 3,5 սմ հեռու: Իսկ պատկերն այսպիսին է. 3,5 սմ տրամագծով շրջանը բաժանված է կենտրոնից ելնող 8 ճառագայթներով: Պատկերի շրջագծով ճառագայթների միջև արված են մեկական կետեր:

Դեղնավուն մանրահատիկ կավից, բավականին լավ թրծված, կարմիր անգոբապատ մեկ այլ բեկորի վրա շրջանի մեջ առնված երկու եռանկյունիներից կազմված վեցաթև աստղ է՝ կենտրոնում փոքր շրջան (ՇԵԹ 3702/25): Բեկորը փոքր է, դրոշմը՝ քիչ թերի: Դրոշմն արվել է իրար զուգահեռ երկու խորակոս գծերով սահմանափակված տարածքում, որն ունի 3,5սմ լայնություն (տախտակ I, նկ. 5): Բոլոր բեկորները գտնվել են Կումայրիի կենտրոնական թաղամասի 1979թ. պեղումների XI-XII դդ. թվագրվող շերտից:

Դրոշմազարդ ամանի մի բեկոր 2003թ. գտնվել է Հայկաձորի պեղումներից (տախտակ I, նկ. 6): Մանրահատիկ կավից, վատ թրծված կարմիր կարասի փոքրիկ բեկորի վրա շրջանի մեջ երկու եռանկյունիներից կազմված վեցթևանի աստղ է, կենտրոնում՝ կետ: Մեծ շրջանի տրամագիծը 3,5սմ է, փոքրինը՝ 2սմ: Մեծ շրջանից ելնում են տասը փոքր, եռանկյունաձև ճառագայթներ: Նախշազարդմամբ սա նման է Կումայրիի գտածոյին: Իսկ թվագրմանն օգնում է այստեղ գտնված XI դ. բյուզանդական դրամը (բնորոշումը՝ դրամագետ Ա. Զոհրաբյանի): Կարմիր ներկված կարասների այս բեկորները մանրահատիկ կավից են, մեծ մասամբ՝ վատ թրծված միջնաշերտով: Դրոշմներն արված են հարթ կնիքներով, խորակոս գծանախշերով սահմանափակված 4սմ լայնությամբ ժապավենի մեջ՝ իրարից 3,5սմ հեռավորությամբ:

Քննարկվող դրոշմները թեև իրար նման են, սակայն իրար չեն կրկնում և իրենց զուգահեռներն ունեն Անիի դրոշմազարդ կարասների զարդանախշերում: Անիի նյութերի մեջ բավական շատ են զուտ երկրաչափական մոտիվները՝ շրջանի մեջ ներառված քառակուսիներով և եռանկյունիներով: Թեև Անիի գոտեզարդ կարասների նախշազարդումը միապաղաղ է, սակայն նույն նախշը բացարձակապես չի կրկնվում:[14]

Միջնադարյան խեցեղենի վրա շրջանի մեջ երկու եռանկյունիներով ստացված զարդաձևը շատ է հանդիպում ջնարակապատ ամանների նախշազարդումներում և ընդունված է որպես «վեցաթև աստղ»: Երբեմն ուսումնասիրողների կողմից այս զարդաձևը դիտարկվել է իբրև վեցանկյուն խաչ:[15] Նշված զարդով անոթներ գտնվել են նաև Դվինից:[16] Այսօրինակ նախշազարդմամբ անոթները թվագրվում են IX-X դարերով: Դրոշմներն իրենց զուգահեռներն ունեն ճարտարապետական հուշարձանների զարդաքանդակներում: Անիի պալատական եկեղեցու հյուսիսային պատի վրա պահպան-

---

** *Նյութերը պահվում են Շիրակի երկրագիտական թանգարանում (ՇԵԹ):*

[13] *Բ. Ա ռ ա ք ե լ յ ա ն, Հայկական պատկերաքանդակները IV-VII դդ., Եր., 1949, նկ. 20, 24:*

[14] *Ի. Օ ր բ ե լ ի, Избранные труды, Ер., 1963, стр. 90, рис. 16,17.*

[15] *Ֆ. Բ ա ր ա յ ա ն, նշվ. աշխ., էջ 30-31:*

[16] *Նույնը:*

վել է այսպիսի մի զարդանախշ:[17] Նմանօրինակ զարդ պահպանվել է նաև Դվինի պեղումներից գտնված գիպսից հարթաքանդակի մի բեկորի վրա: Զարդի կենտրոնում շրջագիծ է՝ շուրջը զույգ եռանկյունիներ, այդ ամենն առնված է շրջագծի մեջ, իսկ վերջինս էլ՝ մի վեցանկյուն աստղի:[18] Այս զարդանախշի հիմքում ընկած եռանկյունին, որպես երկրաչափական մոտիվ, առնչվում է նաև կենաց ծառի հետ: Իսկ ծառը գաղափարական մի եռանկյունի է, որի հիմքում գտնվող անկյունները ներկայացնում են ծնող զույգին, իսկ վերևի անկյունը՝ զավակին: Եվ այս եռանկյունին է, որ հանդիպում է հայկական մանրանկարչության մեջ: Դրանք մեծ մասամբ կենաց ծառի վրա պատկերված են նույնաձև՝ իրար մեջ ագուցված, որից ստացվել է վեցաթև աստղ:[19]

Այծերի պատկերներ. Դրոշմների այս շարքում առավել տիրական են այծերի պատկերները: 1970թ. Կումայրիից գտնված դրոշմազարդ երկու կարասների բեկորների վրա այծեր են (ՇԵԹ 1391): Բեկորներից մեկը սև է: Պահպանված հատվածի վրա 1,4 սմ լայնությամբ խորակոս ժապավենից հետո արված է դրոշմը (տախտակ I, նկ.7): Երկու կենդանիներ են, որոնցից ձախի գլխի և առջևի ոտքերի մի փոքր հատվածն է պահպանվել, իսկ աջ կողմինն անորոշ է՝ բեկորի այս հատվածի կոտրված լինելու պատճառով: Մյուսը նույնպես 1970թ. գտնվել է Կումայրիից (ՇԵԹ 1517), կարմիր կարասի բեկոր է՝ 2,3 սմ լայնությամբ ժապավենի վրա ձախից աջ իրար հետևից գնացող մեծ ու փոքր այծերով (տախտակ I, նկ.1): Կարասն ավազախառն կավից է և վատ է թրծված: Ներկված է կարմրով՝ ազատ թողնելով դրոշմազարդ գոտին: Ի տարբերություն նախորդի, այս դրոշմազարդն առնված չէ գծազարդով սահմանափակված տարածքի մեջ: Դրոշմի վրա չորս այծեր են՝ մի գծով իրար հետևից հանգիստ կանգնած դիրքով: Այծերից երկրորդի մեջքից վերև մի կետ է արված, իսկ չորրորդ այծի մեջքից վերև՝ երկու կետ:

Որսի տեսարան. Եթե նախորդ դրոշմների վրա միայն կենդանիների պատկերներ էին, ապա 1979թ. Մարմաշենից (քառ. Է-2, խոր.՝ 120սմ) գտնված դարչնագույն, մանրահատիկ, լավ թրծված կարասի բեկորի վրա 6 սմ լայնությամբ խորակոս գծանախշերով եզերված ժապավենի մեջ (ՇԵԹ 3306/21) որսի տեսարան է: Երեք կենդանիներ են՝ փախչող այծյամներ և նրանց հետապնդող շուն (տախտակ 2, նկ.3): Առաջին այծյամն ունի փոքր եղջյուրներ, կարճ պոչ, վզին՝ երկու նետ: Երկրորդը նույնպես այծյամ է, որն ունի փոքր գլուխ, սուր ծնոտ, կարճ ականջներ, իրար կիպ երկու փոսիկով արված են աչքերը: Գլխից նետահարված կենդանին պատկերված է ցատկի պահին, առջևի ոտքերը բարձր են և ընդհուպ միացած առաջին կենդանու վեր ցցված պոչին: Երրորդ կենդանին շուն է՝ նույնպես ցատկի պահին պատկերված, ունի բարակ, երկար իրան և երկար պոչ, փոքր գլուխ, կարճ և ցցուն ականջներ: Բերանը բաց է, փոքր փոսիկով արված է աչքը: Շան պոչին կպած մեկ այլ պատկեր է եղել: Թեև այս հատվածից զարդագոտին կոտրված է, բայց պահպանված փոքր մանրամասներից ենթադրվում է, որ պատկերված է ձեռքերը վեր պարզած (գուցե պարող) մարդ:

Կենդանիների կողքին պարող մարդ. Կումայրիից գտնված դեղնավուն, ավազախառն, մանրահատիկ կավից կարասի մեկ այլ բեկորի վրա կենդանիների կողքին պարող մարդ է (ՇԵԹ 1470): Կարասի իրանից դեպի վիզն ընկած հատվածում 4 սմ լայնությամբ ժապավեն է անցնում: Դրոշմը մասամբ է պահպանվել: Աջից ձախ պատկերների այսպիսի շարան է. հեծյալ, այծ, ինչ-որ պատկեր (աղճատվել է մինչ թրծելը) և պարող մարդ (տախտակ 2, նկ.1): Առաջինը հեծյալն է: Ձիու գլուխը հակված է ներքև՝ ընդհուպ մոտեցած կրծքին, առջևի ոտքերն ամբողջ թափով առաջ են նետված: Գավակին մարդ է՝ աջ ձեռքը գլխից բարձր դիրքով առաջ է պարզած, ձախը՝ գոտկատեղին: Այծի դիրքն ուղիղ է: Երկար պոզերը համարյա հպվում են մեջքին, պոչը բարձր է: Այծի գլխի դիմաց արև է, կամ աստղ: Այնուհետև թռչնի աղավաղված պատկերն է: Հստակ երևում են ոտքերը, իրանը պոչի մասով: Արևի կամ աստղի նույնպիսի մի զարդ թռչնի դիմաց է: Հաջորդը պարող մարդու պատկերն է: Մարդն ունի ուղիղ կանգնած դիրք,

---

[17] *Н. Марр, Ани, Дворцовая церковь, Памятники армянского искусства т. XVIII вып. I Пг. 1915; (տե՛ս Ֆ. Բարայան, նշվ. աշխ., էջ 31):*

[18] *Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Եր., 1952, էջ 127:*

[19] *Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Եր., 1955, էջ 240, նկ. 264,265,267,268:*

գլուխը փոքր է, թևերն ուսից բարձր դիրքում են, ընդ որում, աջը շրջան կազմելով հրպվել է թևատակին, իսկ ձախն արմունկից ազատ իջնում է ցած: Հագուստը հասնում է ծնկներին: Այծի և թռչնի աղճատված պատկերի ետին պլանում ուղղահայաց գծեր են: Կենդանիները շարժման մեջ են: Պատկերի ամենավաղ օրինակները հայտնի են ժայռապատկերներից: Այծի և մարդու նույն ոճով արված մի պատկեր հայտնի է Գեղամա լեռներից, ուր այծի կողքին կանգնած է թևերը կանթած մարդ:[20] Այծերի պատկերով դրոշմազարդերը հանդիպում են XI-XIII դարերի կարասների վրա: Արգիշտիխինիլի միջնադարյան շերտից գտնվել է կարմիր փայլեցված կարասի բեկոր՝ դրոշմազարդ զույգ այծերի պատկերով:[21] Նույն հնավայրից գտնված մեկ այլ կարասի վրա այծերը կանգնած են կենաց ծառի մոտ:[22] Միջնադարյան ճարտարապետական հուշարձաններից այծերի նման պատկեր հայտնի է Աղթամարի բարձրաքանդակներից, ուր քանդակված են դեմդիմաց կանգնած այծեր:[23]

Հայաստանի միջնադարյան տարբեր հուշարձաններից հայտնաբերված կարասների բեկորների վրա (X-XII դարեր) այծերը հանդիպում են նաև թռչունների ուղեկցությամբ: Դվինից գտնված կավամանի բռնակի տակից անցնում է 2,5 սմ լայնությամբ դրոշմազարդ գոտի՝ այծի, կենաց ծառի և աղավնու պատկերով:[24]Այծի պատկերները, սկսած ժայռապատկերներից, հանդիպում են բոլոր դարաշրջաններում, տիրական թեմա են հայ մշակույթում: Ուրարտական կարասի բեկորի վրա կենաց ծառի մոտ այծի և առյուծների պատկեր հայտնի է Արգիշտիխինիլի պեղումներից:[25]

Միջնադարյան տարբեր հուշարձաններից հայտնաբերված գոտեզարդ կարասների վրա թեև առավելապես կենդանական և բուսական պատկերներ են, բայց հանդիպում են նաև մարդկանց պատկերներ: Մի քանի բեկոր գտնվել է Անիից և մեկ ուրիշը՝ Դվինից: Այս դրոշմազարդերի վրա այծի հետ պատկերված է երեք պարող մարդ:[26]

Մարտի տեսարան. 1972թ. Մարմաշենից (ՇԵԹ 1433) գտնվել է մանրահատիկ, լավ հունցած վարդագույն կավից կարասի մի բեկոր, որի 4,7 սմ լայնությամբ, երկու եզրագոտով սահմանափակված ժապավենի մեջ մարտի տեսարան է (տախտակ 2, նկ.2): Ձախից առաջինը հանգիստ կանգնած դիրքով ձի է, երևում է գլուխը՝ սանձի մի մասով: Հաջորդը նետաձիգ է: Իրանն ուղիղ, դեմքը կլորավուն է, հոնքերը՝ կամարակապ: Գլխին սրածայր գլխարկ է: Աջ ձեռքը արմունկից ծալված է և ձգել է նետը: Ձախ ձեռքը չի երևում: Ձախ ուսից վերև երևում է միայն աղեղի մի մասը: Այստեղից իրը կոտրված է: Ձիու վիզը երկար է, գլուխը՝ բարձր, առջևի ոտքերը գետնից կտրված են, հետևի ոտքերը՝ քիչ ծալված, երկար պոչը համարյա հասնում է գետին: Հեծյալի պատկերը թեև հստակ չէ, սակայն երևում է, որ աջ ձեռքով բարձր պահել է նետելու պատրաստ նիզակը:

Շիրակի տարբեր հնավայրերից գտնված դրոշմազարդ կարասները կարմիր են կամ դարչնագույն, դրոշմներն արվել են ուղիղ և գլանաձև կնիքներով: Զարդաշարն առնված է 3-4,7սմ լայնությամբ գոտու մեջ, որն ավելի արտահայտիչ է դարձնում դրոշմվածքը: Կարմիր ներկված կարասների զարդագոտիները հիմնականում չեն ներկվել՝ հավանաբար պատկերներն ավելի ընդգծուն և դիտելի դարձնելու համար: Այդ դրոշմազարդ կարասների թեմատիկան տարաբնույթ է: Թեև գտածոները շատ քիչ են՝ ընդամենը մոտ մեկ տասնյակ բեկոր, սակայն ոչ մի պատկեր չի կրկնվում: Դրանք ոչ միայն ավանդական - ծիսական են, այլ նաև ներկայացնում են առօրյա կյանքն ու կենցաղը և նախշազարդման ձևով ունեն ոճական ընդհանրություններ միջնադարյան խոշոր կենտրոնների՝ հատկապես Անիի կարասների հետ: Մարմաշենի, Կումայրիի և

---

[20] *Հ. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն, Հ. Ի ս ր ա յ ե լ յ ա ն, Գեղամա լեռների ժայռապատկերները, Եր., 1971, նկ. 251:*

[21] *Ֆ. Բ ա ր ա յ ա ն, Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական խեցեղենի զարդաձևերը, Եր., 1981, էջ 35:*

[22] *Նույնը:*

[23] *Ֆ. Բ ա ր ա յ ա ն, նշվ. աշխ., նկ. 30:*

[24] *И. О р в е л и, Избранные труды, Ер., 1963, стр. 149; Ֆ. Բարայան, նշվ. աշխ., էջ 36:*

[25] *А. М а р т и р о с я н, Археологические памятники Армении, вып.1,Аргиштихинили, Ер., 1974, стр. 94, рис. 59.*

[26] *И. О р в е л и, Избранные труды, Ер. 1963, стр. 90, рис. .16, 17; Վ. Արրահամյան, Արհեստները Հայաստանում, Եր., 1956. էջ 214:*

Հայկաձորի դրոշմազարդ կարասները կարող էին բերվել նաև Անիից: Տեղում արտադրվելու դեպքում դրոշմազարդ կարասների քանակը թերևս չէր սահմանափակվի մի քանի օրինակով: Դրա օգտին են խոսում նաև դրոշմազարդ կարասների և տեղում արտադրված այլ կավանոթների բեկորների բաղդատումը. դեղնավուն, մանրահատիկ, քիչ ավազախառն կավ, թրծման և այլ հատկանիշների ընդհանրություններ:

Այստեղից հետևում է, որ դրոշմազարդ կարասներն ընդհանրապես ավելի քիչ են արտադրվել: Եվ դա գուցե այն պատճառով, որ օգտագործվել են միայն հատուկ դեպքերում կամ տոնախմբությունների ժամանակ:

Շիրակի դրոշմազարդ կարասների թվագրմանն օգնում են ոչ միայն նույն շերտից դուրս եկած ճշգրիտ թվագրվող նյութերը, այլ նաև զարդանախշերի համադրումը Անիի, Դվինի և Անբերդի նյութերի, ինչպես նաև մանրանկարչության և ճարտարապետական հուշարձանների վրա պահպանված զարդանախշերի հետ: Այս ամենը թույլ է տալիս Շիրակի դրոշմազարդ կարասները թվագրել XI-XII դարերով:

Շրջանառության մեջ դրվող հավաքածուն լրացնում է դրոշմազարդ կարասների մինչ այժմ հայտնի պատկերների թեմատիկան՝ միաժամանակ ընդարձակելով Հայաստանում դրոշմազարդ կարասների տարածման տիրույթը:

ՏԱԽՏԱԿ 1



ՏԱԽՏԱԿ 2



ШТАМПОВАННЫЕ КАРАСЫ ИЗ ШИРАКА

___ *Резюме* ___ ___ *Л. Еганян* ___

В статье рассматривается группа карасов, выполненных техникой штамповки, раскопанных из средневековых памятников Мармашена, Кумайри и Айкадзора. Изучение орнаментов на штампах показывает, что основная тематика -это геометрические орнаменты, изображения животных, сцены сражения и охоты. Сравнение орнаментов и рисунков с материалами из известных средневековых центров производства штампованной керамики показывает, что по стилю и выполнению они близки материалам из Ани. Рассматриваемый материал датируется X-XII вв.